# Visa Virtual Քարտի տրամադրման և սպասարկման սակագներ

| Ծառայության տեսակ | Սակագին |
|---|---|
| 1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար | 1 000 ՀՀ դրամ միանվագ |
| 2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք | 0% |
| 3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք | 21.5 % (գանձվում է գերածախսի դիմաց) |
| 4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված | - |
| 5. Ամսական պարտադիր մարումներ | - |
| 6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով) | - |
| 7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով) | - |
| 8. Քարտային հաշվի արժույթ | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո |
| 9. Քարտի գործողության ժամկետ | 12 ամիս |
| 10. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում` | |
| • *ԱԿԲԱ Բանկ* | - |
| • *«Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկեր* | - |
| • *Այլ բանկեր Հայաստանում* | - |
| • *Այլ բանկեր արտերկրում* | - |
| 11. Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափ | - |
| 12. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ | - |
| 13. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ | ▪ 1,000,000 ՀՀ դրամ<br>▪ 2,000 ԱՄՆ դոլար<br>▪ 2,000 եվրո |
| 14. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով | 0.5% |
| 15. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ | - |
| 16. SMS-տեղեկացում ծառայություն | 15 ՀՀ դրամ` ներառյալ ԱԱՀ<br>(գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց) |
| 17. Քարտի փոխարինում Հայաստանում | - |
| 18. Քարտի փոխարինում արտասահմանում | - |

**Ծանուցումներ**

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից»` հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես`

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և' դրամային (7 միլիոնից ավել), և' արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը` մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և' դրամային (7 միլիոնից պակաս), և' արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը` 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով` յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր հանձնարարությամբ:

**Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն**

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար` բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման վարձը գանձվում է ամսական սկզբունքով:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

թարմացվել է առ` 01.12.2020թ.